ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«03» 09 2024 թ.
№ ԳԱՊ-24-33-1390

«ՏԵՆԴԵՐ ՊՐՈ» ՍՊԸ-ի տնօրեն
Կ. Մարգարովային
ՀՎՀՀ 08274655
հասցե՝ ք. Երևան, Բաղրամյան 1 փկղ., 14շ., 147 բն
հեռ. 041 78 76 72

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-33/1» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակներում մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ՏԵՆԴԵՐ ՊՐՈ» ՍՊԸ-ն: Մասնակցության հայտի Հավելված 1-ով (ընթացակարգին մասնակցելու դիմում հայտարարություն) «ՏԵՆԴԵՐ ՊՐՈ» ՍՊԸ-ն հավաստել է, որ իրեն փոխկապակցված անձինք բավարարում են Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին: Գնահատող հանձնաժողովի կողմից հայտերի գնահատման արդյունքում «ՏԵՆԴԵՐ ՊՐՈ» ՍՊԸ-ն 22-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից, ինչից հետո ՀՀ պաշտպանության նախարարության և «ՏԵՆԴԵՐ ՊՐՈ» ՍՊԸ-ի միջև 22.07.2024թ. կնքվել է ապրանքների մատակարարման ԳՀԱՊՁԲ-24-33/1-8 ծածկագրով պետական գնման պայմանագիր:

ՀՀ պետական վերահսկողական ծառայության կողմից իրականացված վերլուծությամբ պարզվել է, որ «Ռվ Պրոջեկտ» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ 02853495) 2023 թվականի մարտի 7-ից մինչև 2025 թվականի մարտի 7-ը ներառված է գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, իսկ «Ռվ Պրոջեկտ» ՍՊԸ-ի և «ՏԵՆԴԵՐ ՊՐՈ» ՍՊԸ-ի միջև առկա է փոխկապակցվածություն, մասնավորապես՝ «ՏԵՆԴԵՐ ՊՐՈ» ՍՊԸ-ի 100% բաժնեմասի սեփականատեր և տնօրեն Կարինե Հենրիխի Մարգարովան հանդիսանում է «Ռվ Պրոջեկտ» ՍՊԸ-ի 100% բաժնեմասի սեփականատեր և տնօրեն Ռաիսա Կամոյի Վարդանովայի մայրը՝ համաձայն ՀՀ ԱՆ ՔԿԱԳ գործակալության ծննդյան ակտի գրանցման վկայականի, ինչը տվյալ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում, հիմք կհանդիսանար պայմանագիրը չկնքելու համար:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «ՏԵՆԴԵՐ ՊՐՈ» ՍՊԸ-ի միջև 22.07.2024թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-24-33/1-8 գնման

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

պայմանագրի 8.3 կետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2024թ. սեպտեմբերի 3-ին միակողմանի լուծել է նշված պայմանագիրը:

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ՝ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է 140 000 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին:

Միևնույն ժամանակ հայտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Այս կապակցությամբ տեղեկացնում եմ, եթե մինչև 2024թ. սեպտեմբերի 13-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված գումարը, ապա «ՏԵՆԴԵՐ ՊՐՈ» ՍՊԸ-ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարը անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշվեհամարին և վճարված կտրոնի բնօրինակը մինչև 2024թ. սեպտեմբերի 13-ը ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2070 սենյակ:

Միաժամանակ հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «ՏԵՆԴԵՐ ՊՐՈ» ՍՊԸ-ի միջև 22.07.2024թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-24-33/1-8 գնման պայմանագրի 8.3 կետը, տեղեկացնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից այլ ընկերությունից նշված պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրով և քանակով ապրանք ձեռքբերելու դեպքում «ՏԵՆԴԵՐ ՊՐՈ» ՍՊԸ-ն պարտավոր է փոխհատուցել գնային տարբերությունը, եթե նոր պայմանագիրը կնքվում է ավելի թանկ գնով, որի վերաբերյալ Ձեզ լրացուցիչ կծանուցվի:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ